ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2012թ. ապրիլի 11 թիվ 35-Ա

ԱՇՏԱՐԱԿԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԻՆԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ԿՈՂՄԻՑ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻ 1985-1994ԹԹ ԾՆՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ ԵՎ ԶՈՐԱԿՈՉԸ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Զինապարտության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ և 17-րդ հոդվածների պահանջներով Աշտարակի զորակոչային տեղամասում 1985-1994թթ. ծնված քաղաքացիների գարնանային զորակոչը կազմակերպված անցկացնելու նպատակով՝ ***կարգադրում եմ.***

1. Աշտարակի տարածքային զինվորական կոմիսարին՝
1) մարտ-հունիս ամիսներին սկսել 1985-1994թթ. ծնված քաղաքացիների զորակոչը.
2) զորակոչել արական սեռի այն քաղաքացիներին, որոնց զորակոչային տարկետումները լրանում են 2012թ. գարնանը և 18 տարին լրանում է զորակոչի օրը.
3) պարզել 1985թ. մինչև 1994թ. ծնված զինակոչիկների գրանցման տվյալները.
4) ստուգել տարկետման մեջ գտնվող զինակոչիկների փաստաթղթերի օրինականությունը և տեղեկանքների թարմացումը.
5) զորակոչը և զորակոչի զննման աշխատանքները սկսել 2012թ. մարտ ամսին և ավարտել 2012թ. հունիսի 30-ին:

2. Հաստատել՝
1) զորակոչային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելված 1:
2) զորակոչիկների բժշկական ստուգումներն անցկացնող հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելված 2:

3. Մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետին՝
1) ապահովել բժշկական հանձնաժողովի բոլոր անդամների պարտադիր ներկայությունը զորակոչային հանձնաժողովի աշխատանքներին:
2) բժշկական ստուգման և զորակոչի օրերին զորակոչային և բժշկական հանձնաժողովի անդամներին ազատել իրենց աշխատանքային պարտականություններից:

4. 'Աշտարակի բժշկական կենտրոն' ՓԲԸ-ի տնօրեն Արթուր Հովհաննիսյանին՝
1) կազմակերպված անցկացնել զորակոչի ենթակա բոլոր զորակոչիկների ֆլյուորոգրաֆիան, արյան խմբի որոշումը և ՄՈՊ-ը:
2)ժամանակին կազմակերպել այն զորակոչիկների բուժումը, որոնք զորակոչային հանձնաժողովի կողմից ուղարկվել են բուժման :
3) Հանձնաժողովին ապահովել անհրաժեշտ գույքով, հատուկ բժշկական սարքավորումներով, դեղորայքով:
4) Զինկոմիսարիատի հայտով հատկացնել մեկ սանիտարական մեքենա՝ զորակոչիկներին Հանրապետական հավաքակայան տեղափոխելու համար:
5. Աշտարակի տարածաշրջանի համայնքների, հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարներին, թաղային կոմիտեների նախագահներին և 'Աշտարակի բժշկական կենտրոն' ՓԲԸ-ի տնօրենին՝
1) օժանդակել զորակոչիկների ժամանակին և պարտադիր ներկայությունը զինկոմիսարիատ՝ համաձայն զինկոմիսարիատի ներկայացրած չվացուցակի և անհատական ծանուցագրերի:
6. Բոլոր համայնքների ղեկավարներին՝ զորակոչից առաջ զինկոմիսարիատի հետ միասին մանրամասն ճշտել զորակոչիկների տվյալները:
7. Հանձնարարել ՀՀ Ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության Աշտարակի բաժնին՝
1) ապահովել հասարակական կարգի պահպանումը զորակոչի տեղամասում:
2) զինկոմիսարիատից ստացված տվյալների հիման վրա կազմակերպել այն անձանց որոնումները, որոնք խուսափում են ներկայանալ զորակոչային տեղամաս:
8. Սույն կարգադրության կատարման պատասխանատվությունը դնել Աշտարակի զինվորական կոմիսար Է. Մկրտչյանի վրա:

Ժամանակավոր
պաշտոնակատար

ԱՌԱՔԵԼՅԱՆ

Հավելված թիվ 1
ՀՀ Արագածոտնի մարզպետի
2012թ. ապրիլի 11-ի թիվ 35-Ա
կարգադրության

ԿԱԶՄ

Աշտարակի տարածքային զինվորական կոմիսարիատի զորակոչային հանձնաժողովի

Է. ՄԿՐՏՉՅԱՆ - Աշտարակի տարածքային զինվորական կոմիսար, հանձնաժողովի նախագահ

Կ. ՍԱԴՈՅԱՆ - ՀՀ Ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության Աշտարակի բաժնի պետի տեղակալ

Ս. ՀՈՎՍԵՓՅԱՆ - ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ

Կ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ - թերապևտ, հանձնաժողովի ավագ բժիշկ

Ե. ՂՈՒԿԱՍՅԱՆ - բուժքույր, հանձնաժողովի քարտուղար

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հավելված թիվ 2
ՀՀ Արագածոտնի մարզպետի
2012 թվականի ապրիլի 11 -ի թիվ 35 -Ա
կարգադրության

ԿԱԶՄ
Աշտարակի տարածքային զինվորական կոմիսարիատի գարնանային բժշկական զորակոչային հանձնաժողովի

Կ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ - թերապևտ, ավագ բժիշկ
Գ. ՕՀԱՆՅԱՆ - վիրաբույժ
Ս. ՄԻՐԶՈՅԱՆ - ակնաբույժ
Ն. ՄԱՆՎԵԼՅԱՆ - մաշկավեներոլոգ
Հ. ԲՈՅԱԽՉՅԱՆ - քիթ-կոկորդ-ականջ
Լ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ - նյարդաբան
Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ - հոգեբան
Գ. ԱՌԱՔԵԼՅԱՆ - ատամնաբույժ

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.ԳԵՎՈՐԳՅԱՆ